

ԽԱՐԵՐԱՅ...

Maurice Level

Անսահման ծովը ննջում էր երեկոյեան հանգստի ծոցում։ Արևը իջնում էր դէպի հորիզոն։ Լուռ ու անձայն սուրալով, մեծ-մեծ թռչունները դիմում էին, փախչում դէպի մօտաւոր բաց ծովը, և ծովափը,—վրայից հազիւ սահող—անցնող ալիքների փափուկ, թացիկ փաղաքշանքներից դուրգուրուն աւազուտ ծովափը, պարզել, տարածել էր իւր կողերը՝ համբոյրների տակ նիրհող, մրափուն կնոջ նման։

Ծովափի մօտ եղած բարձր, ցից ժայռերի՝ խարակների կատարին, ինձ մօտ, կանգնած էր մի պառաւ կին, անշարժ, ձեռնամած։ Խոտերն ու բոյսերը կռացնող պաղ քամին, նորա շրջադռնստը պինդ կպցրել էր ծնկներին և ալեխառն մազերի փնջերը տանում-բերում, ցրում ու կպցնում էր նորա դէմքին։ Եւ այդ դէմքը՝ աւեր ու տակն ու վրայ եղած, շրթունքները դողդոջուն, աչքերը տխուր, մաշուած, և մինչ այն աստիճան խոր գնացած իրենց խորշերի մէջ, որ կարծես նորա սրտի խորքն էին ուղում թափանցել...

Եւ, յանկարծ, վերջալոյսի այդ ժամը, որ մի բոպէ առաջ այնքան ժպտուն ու սքանչելի էր թւում ինձ, տէքիս տխուր ու ամայի երևեցաւ, կարծես թէ, նուազուն երկնքի տակ, այդ անտարբեր և երազող պառաւ կինը, իւր գլխի սպիտակ, սևով եղերուն, ծածկոցի ծալքերի մէջ բերել ու սփռել էր այդտեղ, իջնող գիշերուայ առաջ դուրս կանչած բոլոր սուգն ու տըրտմութիւնները... Արևը բոլորովին մայր մտաւ, անհետացաւ։ Ծովափի եզերագծի վերայ գտնուող բոլոր փարոսները վառւում էին հեռզհետէ, նոցա լոյսը, կարծես, հալածում էր աստղերը, աւելում, մաքրում ծովի երեսը, ալիքների կատարներին մի վաղանցուկ սարսուռ դրոշմում... Երեկոյեան ժամերգութեան զանգակի ձայնը հնչեց։

Բրետանի զանգակները մի ինքնուրոյն, օտարոտի հնչիւն

ունին: Կարծես այդ հնչիւնները շտապում են կաշել, անցնել կառուրների վրայից, ծառերի ճիւղերի միջից, որպէսզի աւելի լաւ տարածուին, աւելի աճեն ու մեծանան, երկարեն ու ձգուին, և յետոյ գնան ու կորչեն, մեռնեն հեռում, հեռու հեռու արեւների կատարներին ու ձողերի վերայ, փոխարկուելով, համարեա, մի մարդկային ձայնի, որ շտապում է դէպի բաց-ծովը, փարոսների լուսավառ հայեացքների մէջ ծրարուած, ուշը մնացած կամ կորած ձկնորսներին հասնելու ու միանալու միտումով:

Պառաւր մի քայլ արեց և կանգնեց ափին այնքան մօտիկ, որ իւր փայտէ սանդալի տակ հողը մի քիչ յետ գնաց և գլորուեց ժայռից-ժայռ, դէպի վար: Նորա թւից բռնեցի և պահեցի:

— Զգոյշ եղէք, մայրիկ: Վայր կը գլորուիք...

Եւ նա շնչաց:

— Ահ... այո՛...

— Պէտք է տուն դառնալ, ահա քամին բարձրանում է: Այս գիշեր ցուրտ պիտի անի:

Դուրսը բարձրացրեց և երկու անգամ կրկնեց ասածս:

— Ցուրտ պիտի անի այս գիշեր, շատ ցուրտ...

Բայց նա չ'շարժուեցաւ իւր տեղից: Նկատեցի միայն, որ արտասուքի մի կաթիլ փայլեց իւր աչքերում: Կարծելով, որ ըմբռնում եմ նորան յուզող ներքին մտքերը, հարցրի.

— Նաւակի էք սպասում...

— Ոչ... Ոչնչի չեմ սպասում... Նայում եմ միայն...

Մայր մտնող արևի վերջին հրճատող բոցերի միջից սահում էր մի առաջաստանաւ: Բոսոր ցուրեքը դեռ ևս վէտ-վէտ էին ներկում արեւները և լուսինը բարձրանում էր ամպերի միջից: Այդ նոր իջնող, մատաղ գիշերը մի սքանչանք էր: Ես նորից սկսեցի.

— Սիրում էք ծովը... Հրաշալի է նա, սիրուն...

Իւր աւեր դարձած դէմքը շրջեց դէպի ինձ և խոփոռ աչքերով, կնճռոտ ճակատով, դժգոհ փնփնթաց.

— Ոչ, նա սիրո՞ւն չէ: Ոչ, չեմ սիրում այդ ծովը, այդ ցած անպիտանին, այդ վատշուէր սինլըորին...

Եւ, յանկարծ, բարկացկոտ և ձեռքի համարձակ շարժումով, շարունակեց.

— Դուք քաղաքացիներդ, դուք երկիւղ ունիք միայն ցած կանանցից: Նոքա են, որ խլում են ձեր զաւակներին, որ գողանում են նոցա ձեր ձեռքից: Իսկ մեզանում գողը, ցած,

անառակ կիներ, նա է... Դիտեցէք նորան, իւր հեղ, խաղաղ կերպարանքով... Տեսէք նորան... Եւ անա ալդ դէմք ու կերպարանքով է, որ խլում է մեզանից մեր զաւակներին: Աշխարհ հնր բերում, մեծացնում նոցա, պահում-պահպանում, դաստիարակում և նորա փաղաքշանքների զգուանքի տակ նոքա մոռանում են ամեն ինչ... Իւր զաւակը, իւր արիւնը իւր կշտին պահելու համար մարդ ուղում է նոցա արհեստաւոր երկրագործ դարձնել... Բայց չէ: Նոքա պէտք են նորան: Նոքա ձկնորս են դառնում: Եւ դա՛ նոցա արեան մէջն է...

Ես էլ եմ աշխարհ եկել այստեղ, այս դիւղի մէջ և այն օրից, երբ կարողացել եմ մտածել և հասկանալ, ես միայն շուրջս սուգ ու տրտմութիւն եմ տեսել:

Նախ,—հայրս էր: Մի երեկոյ, մի հրաշալի երեկոյ՝ նա մեկնեց. դիշերը, մի դարհուրելի փոթորիկ բարձրացաւ... ոչ ոք չէր նախատեսել այդ հանգամանքը, նոյն իսկ նաւաստիներէրց և ոչ մէկը... Նորանից յետոյ, եղբայրներս... իւրաքանչիւր տարի, ամեն եղանակի մեր սեղանը աւելի ու աւելի էր փոքրանում... Մէկ-մէկ, դնում էին ամենքը, պակասում էին... Ցանցերը չորացան արևի տակ, քամու առաջ՝ կախուած դռներից: Նաւակը բորբոսանց ու փթեց իւր կառանի վերայ: Թշուառութիւնը վրայ կոխեց, տիրեց: Պէտք էր աւազուտ ծովափն իջնել, որսալ խեցգետին, կարիդոս., լիճ կը կամենայիք, որ անէինք: Ուրիշ արհեստ խօմ չդիտեց... Այդպիսով, տղամարդիկը վերջանալուց յետոյ, կանայքը պիտի ողորմութիւն խնդրէին ծովից... Ինչ որ ամբողջ օրը, կողովը կռնակին, փոքրիկ ցանցը ձեռքին, որսալ կարող են, դա, կարծես մի ողորմութիւն է, որ այդ ցած սրիկան շարտում է խեղճ ու կրակ աղքատին:

Սակայն, մարդ օրը լաց ու սուգով անցնելով, վերջ ի վերջոյ սովոր է դառնում և դորան: Այնքան մահ ու սուգ ենք կրել, մէկ մէկու յետից, որ չենք էլ նկատում մեր գլխի սեւ և չենք էլ մտածում ազատուել դորանից... Եւ յետոյ ինքդ էլ ամուսնանում ես մի նաւավարի, կամ նաւաստու հետ, ինչպէս և միւսները...

Սկզբում, կարծեցի, որ դժբախտութիւնը չքացել է իմ կեանքի ճանապարհից: Բայց նա կմոռնայ իսկի... Մէկը միւսի յետևից՝ կորցրի իմ չորս ուղիս: Իմ գլխի տէր, տան տղամարդն էր մնում միայն: Դա մի իսկական ծովի զաւակ էր, մի հուժկու, անոնի նաւավար: Ամեն ինչ տեսել, անցել էր,—և՛ փոթորիկ, և՛ արեկոծութիւններ և ծովը՝ իւր լայնք

ու երկայնքով, որը նորան շարունակ ոտքի վրայ ամուր կանգնած տեսնելով, կարծես, վախենում էր այդ մարդուց...

Վերջին անգամ ծով դուրս եկաւ բրաձուկ որսողներին հետ, որ դնում են մինչև Տէրր-Նեօվ, այդ ձուկը որսալու համար:

Այնտեղ, մնում են ամիսներով, օր ու գիշեր, անձրևի, ձիւնի ու քամու տակ, և ծովից գրոհ տուող ալիքները, տաշեղի կտորների կամ փետուրների պէս են սրբում, տանում թարգևանց: Այդ անգամ սաստիկ անհանգիստ էի և երբ վերադարձի ժամանակը մօտեցաւ, սիրտս մի ահ ու երկիւղ պաշարեց,—խօս գիտես անիկն է տարել մահիկը,—մի երկիւղ որ ինքս էլ չէի կարողանում բացատրել:

Յունիսի օրերից մէկի առաւօտն էր, որ վերադարձանք. մի անուշ, արև օր, նաւերը լիքը բրաձուկով: Մարդս «Ժան-Մարի»-ի վրայ էր, և «Ժան-Մարի» նաւահանգիստ մտաւ ամենից վերջը: Իսկոյն սիրտս մի ինչ որ անհանգստութեան յոյզ պատեց: Եթէ թարգս այնտեղ էր, ապա իւր նաւը ամենից շուտ պիտի կառանի կապուէր: Եւ հէնց որ առաջին նաւաստիներն ուժի եկան, կանչեցի.

—Մարդս... Ո՛ւր է թարգս...

—Գալիս է, ասաց նաւի փոքրաւորը, Համբերեցէք մի քիչ...

Սրտիցս, կարծես, մի ժեռ քար վերցրին: Կարծում էի... Վերջապէս տեսայ նորան, որ առաջանում էր նաւի-յարկի վրայով, յենուած ընկերներից երկուսին: Եւ յառաջանում էր շատ ամուր քայլուածքով: Եւ երբ որ բոլորովին մօտեցաւ, ձայն տուի նորան: Կանգ առաւ և գլուխը սկսեց աջ ու ձախ դարձնել...

—Դձեւ ես, ա՛յ կնիկ... Ո՛ւր ես, որտե՞ղ ես...

Ա՛, այդ ձայնը... Դեռ ես հնչում է այդ ձայնը ականջիս մէջ: Բայց դորանից աւելի իւր դէմքն է պատկերացած աչքիս առաջ, իւր դէմքը. իւր անշարժ, ապիտակ մորուսով պատած դէմքը, այնքան ապիտակ, որ իւր արեւոյ, սևացած մորթու վրայ բիծ էր կազմում,—և իւր աչքերը, իւր խեղճ աչքերը՝ առանց արտևանումների և յօնքերի, իւր մեռած, այրուած, հանգած աչքերը... Քամին, մառախուղը, ծովի ջուրը կարմրատակել էին տուել: Եւ երբ ինքն իրեն գրկիս մէջ զգաց, դող-յոյուն ձեռքերն այտերիս վրայ դրեց և սկսեց լալ ու ասել:

—Կոյր եմ, կոյր... եմ, խեղճ պառաւ...

Երբէք չէք տեսել այդ տեսարանը, պարոն, թէ լինչպէս

է լալիս կոյրը... Յոյս ունէի, որ հոգածութեան շնորհիւ աչքերույսը նորից կը գտնէ: Բայց աւանդ: Օրեր, շաբաթներ, ամիսներ էին անցնում և ոչ մի փոփոխութիւն: Այլ ևս չէր դուրս գալիս տնից: Ամբողջ օրը նստած էր մնում դռան առաջ և ականջ դնում ժայռերի մէջ գոյացող ծովի ալիքների աղմուկ, ժխորին: Գիշերները, շատ անգամ, դարթեցնում էր ինձ և ասում.

— Երազումս տեսայ, որ տեսնում էի...

Որովհետեւ, եթէ երբեմնակի ընդհատում էր իւր սակաւախօս վիճակը, այդ էլ նորա համար, որ խօսէր իւր աչքերի, իւր խոր գնացած, դատարկուած աչքերի մասին... Ոչնչով չէր հետաքրքրւում, կեանքը, կարծես, մեռել էր նորա համար, ինչ հոգան էր, թէ ի՞նչ է անցնում-դառնում... Հետը, այնտեղից բերած մի քիչ դրամը հալւում սպառւում էր և երբ վրայ հասաւ վատ եղանակը, մինք այլ ևս ոչինչ չունէինք:

Նա, որ մի ժամանակ այնքան հոգատար, նախատեսող բնաւորութեան աէր էր, այժմ բոլորովին անտարբեր էր դարձել, մոռացել էր կեանքը և ապրուստի հոգսերը:

Եւ ես, երկիւղ կրելով, որ չլինի թէ աւելի վշտացնեմ և բարկացնեմ, ես էլ չէի համարձակւում ոչինչ ասել:

Բայց և այնպէս, քանի որ պէտք էր ապրել, — այնպէս չէ՞, — կամաց-կամաց, մէկ-մէկ ծախեցի տան մէջ եղած-չեղածը, կահ կարասին, ամենը, ամենը, մինչև իսկ այն հնութեան յիշատակ իրերը, որ ժառանգութիւն էինք ստացել մեր պապերից, իրեր որ մարդ սիրում է միշտ աչքի առաջն ունենալ և որ ձեզ յիշեցնում է իրենց հետ կապուած այնքան քաղցր յիշողութիւններ... Ամենը գնաց, ամենը, — կամաց-կամաց, մէկ-մէկ. բոլորը, — վերմակներ, սպիտակեղէն, ցանցեր, մանր թռուռներ, ուռկաններ, նաւահանգստի թմբին ծփացող նաւակը, և ժամանակը ցոյց տուող մեր ժամացոյցը, պատից կախ այն ժամացոյցը, որի ձայնը դեռ շատ փոքր հասակից էի լսել և որի ձայնը, այժմ, գիշերները աշխատում եմ մտաբերել:

Այդ բռնը, նա համարեա թէ նկատեց: Որովհետեւ մի անգամ, երբ նորա քունը չէր տանում, հարցրեց.

— Զինի՞ թէ այժմ խուլ էլ եմ դարձել: Ահա այժմ այլ ևս չեմ լսում ժամացոյցի ձայնը...

— Փչացել է, պատասխանեցի: Նորոգելու եմ տարել...

— Լաւ, ասաց նա: Եւ սկսեց նորից իւր աչքերի մասին խօսել: Եթէ կարողանայի գտնէ մի ժամ միայն տեսնել, ինչքան

լաւ բան կլինէր մի չորս կողմս նայէի, տեսնէի: Ամեն բանի տեղը շատ լաւ յիշուած է: Այ, այստեղ պահարանը և իւր պըս-պղացող պղնձեղէնը: Այնտեղ՝ դաստապարիկը (buffet) և անագէ վաղեմի օրերի պնակները: Ժամացոյցը: Վառարանը իւր երկաթներով... Պատերի երկարութեամբ փռած շիկագոյն թիւերից հիւսած ուռկանները, իսկ այնտեղ, նաւահանգստում իմ սիրուն նաւակս, Անտուանետը, իւր հողմակալ առագաստներով և ա-մուր թիւերով:

Ես չէի կարողանում լսել նորան. մարմինս դողում էր: Եւ ասպէս վատ էի գտնում ինքս ինձ: Քիչ էր մնում, որ բե-րանս բանայի ու ասէի.

«Այդ բոլորից և ոչ մէկն այժմ գոյութիւն չունի, չկայ, իմ խեղճ ծերուկ»:

Բայց թէ՛նչ օգուտ դորանից... Որովհետեւ Աստուած զրկել էր նորան աչքի լոյսից, աւելի լաւ չէր, որ երբէք ոչինչ էլ չի-մանար: Այդպիսով յետոյ, շատ յետոյ, նա կերթար... առանց ոչնչի մասին իսկ կասկած ունենալու:

Պառաւր լռեց և մի խոր հառաչ արձակեց. «Ա՛, բարե-սիրտ մարդիկ»...

— Շատ լաւ, շատ լաւ, ասացի նորան, յուսահատուել պէտք չէ... Ասացէք ինձ ձեր անունը, ես կհոգամ ձեր մասին և դուք կարող կը լինիք ապրել առանց դժուարութեան և մեծ նեղութիւնների: Յամենայն դէպս առէք սա:

Մեկնած ձեռքս հրեց.

— Դուք շատ բարի էք, պարոն, բայց, եթէ նոյն իսկ դորանից շատ ու շատ ունենալի, կարող կլինեմ արդեօք ամեն կողմ ցրուած իրեղէններս նորից ժողովել... Որովհետեւ այժմ ես... այլ ևս չեմ կարող ստել, խաբել... Պրծած է... իմ պատիժս է... Ահ, ես դեռ ձեզ չեմ պատմել ամենից սոս-կալին... Այս առաւօտ, բօրիկը եկաւ... և երբ դիտեց իւր աչքերը, ինձ մի կողմ քաշեց և ասաց.

— Գիտէ՞ք, կարող է պատահել, որ նա աչքի լոյսը գտնէ:

Սկիզբը, այդ լուրը ինձ ուրախացրեց, անշափ ուրա-խացրեց, մինչ այն աստիճան, որ քիչ մնաց ուշքս զնար և յետոյ, միանգամից, մտքովս անցաւ իմ խեղճ մարդը, դատար-կուած անով, մերկ պատերով, իմ խեղճ մարդս, որ իզուր կ'որոնէր ծնողներից յիշատակ մնացած իրերը, որ դուրս կը-վազէր և չէր գտնիլ այլ ևս իւր նաւակը... Երևակայեցի իւր անհուն վիշտը, զայրոյթը, իւր խեղճ աչքերը, որ միայն եր-կան, անվերջ և առաւել սաստիկ արցունք թափելու համար

պիտի բացուէին. այն հայեացքը, որ միշտ վրաս մեխուած պիտի գգայի, այն մտածմունքը, որ անշուշտ գամուած պիտի մնար իւր մոքում, թէ այդ բոլորը ծախճխոտել եմ միայն իմ ծուլութեան պատճառով... Եւ դեռ ո՞վ գիտէ ինչեր... Օ՛, ոչ, չեմ կարող... Չեմ կամենում... Սովորել էի լուռ, սրտիս խորքում տանջուել. հաշտուել էի՝ թէ կարող եմ խաբել մշտապէս և առանց որևէ վտանգի... Եւ այժմ, այլ ևս չեմ համարձակուում տուն դառնալ... Եւ եթէ նոյն իսկ այնքան դրամ ունենամ, որ կարողանայի գնել կահ-կարասիք և ամեն ինչ, բայց և այնպէս ոչնչով չէի կարող մոռացնել տալ նորան այն վաղեմի օրերի յիշատակ իրերը, որ ոչնչով չի գնւում և մարդ այնքան կապուած է լինում հետը... Ա՛, խեղճ ողորմելի կին, ինչո՞ւ պիտի քանդես արածդ... Եւ ի՞նչ կարող եմ ասել ինձ արդարացնելու համար, որ խաբել, ստել եմ ու խաբել...

Եւ սկսեց լալ, գլուխը ձեռքերի մէջ առած:

— Լաւ, լաւ, հանգստացէ՛ք, ասացի նորան... Մտածեցէ՛ք, որ ձեր ամուսինը բացի ձեզնից, ուրիշ ոչ ոք չունի... Ես ինքս կը խօսեմ նորա հետ... Եկէ՛ք ինձ հետ:

Աչքերը սրբեց:

— Է՛, շատ բարի: Վերադառնանք երկուսով...

Դիչերը բոլորովին մութ, խաւար էր: Իջնող ճանապարհն այնքան նեղ էր, որ ես պարտաւորուած էի առաջ անցնել: Եւ քայլելու ժամանակ շարունակում էի խօսել նորա հետ: Եւ նա ինձ պատասխանում էր ցած ձայնով. լսում էի և նորա հեծկտոցը, որ երբեմն-երբեմն ընդհատում էր նորա խօսքերը: Մի առժամանակ, ճանապարհը այնքան վատացաւ և խաւարն այն աստիճան սաստկացաւ, որ հազիւ էի կարողանում քայլելու ուղղել: Եւ լռեցի:

Այդպիսով մենք յառաջացանք մի քանի վայրկեան: Յանկարծ, ինձ այնպէս թուաց, որ մօտիկ, ինձ շատ մօտիկ, մի ձայն մըմնջաց մի բառ միայն, — «խաբեբա՛ւ»: Եւ որ մանր խճերը, կարծես, ջարդուելու, փշրուելու պէս եղան, ներքե գլորուեցան, բայց ճիշտ հէնց այդ վայրկեանին, ստիպուած էի ամուր փաթաթուել մի ժայռի, որպէս զի վայր չ'գլորուէի ոտքիս տակ բացուած անդունդը, որի սարսափն ու երկիւղը խաւարի քօղով պտտեց միտքս...

Շուտով, կածանն աւելի լայնացաւ, և լուսինը լուսաւորեց ցից-ցից խարակները: Սրտիցս, կարծես, մի ծանր բեռ վերցնելու թեթևութիւն գգալով, մի խոր հառաչ արձակեցի և ասացի ծիծաղելով.

—Ա՛յ քեզ զբօսանք, որ առանց լապտերի չէի ուզենալ կատարելու իսկ որ քարայծի ճանապարհ է... Է՛, այս կողմն եկէք, իմ սլատուական, քաջարի տիկին. այստեղ եկէք: Յենուեցէք վրաս...

Ոչ մի պատասխան, Գլուխս շրջեցի: Մէն-մէնակ էի: Ձայն տուի Կանչեցի: Դռնացի: Վերադարձայ եղած կածանով... Ոչինչ... Ոչ մի բան, բացի հեռու, շատ հեռու վուռղ բուխ չարագուշակ ձայնը... Այն ժամանակ մի քանի վայրկեան առաջ ականջիս հասած հեծկլտանքը, գիշերուայ խաւարի գրկում կէս-լսած, կէս-կուհած խօսքը, կածանի վերայ եղած խիճերի ջարդուելու և ցած գլորուելու խուլ ձայնը արագ անցան իմ յիշողութեան առաջ և ես մնացի սառած, քար-կտրած՝ կանգնած այստեղ, երկմբ, անվերջ, գլխաբաց, անշարժ:

Գիշերն անծայր, անթափանց և մեղմ էր. ակիքները գալիս զարկում էին, ծփծփում խարակների կողերին և աստղերի երերուն ցուքի տակ ովկիանոսը մի վիթխարի հեշտալի սարսուռով փռում, տարածում էր իւր անհուն ջրերը:

Թրգմ. Ֆր. Տ. Վ.